ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ,ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ, ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշեց.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2022թ.-ի հունիսի 29-ին, ժամը 11:00-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ արտահերթ նստաշրջան գումարելու, գլխավոր դատախազի և Վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների ընտրություն իրականացնելու վերաբերյալ:

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2022թ.-ի սեպտեմբերի 15-ին լրանում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի լիազորությունների ժամկետը: Առաջնորդվելով Սահմանադրության 177-րդ հոդվածի 1-2-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ և 145-րդ հոդվածներով՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը գլխավոր դատախազի պաշտոնում թեկնածու է առաջադրել Աննա Կարենի Վարդապետյանին: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը գլխավոր դատախազի պաշտոնում 28.09.2022թ.-ին Ազգային ժողովին է առաջարկել Աննա Կարենի Վարդապետյանի թեկնածությունը:

25.02.2022թ.-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքը, որի 3-րդ հոդվածով ՀՀ վճռաբեկ դատարանում ստեղծվել են վարչական և հակակոռուպցիոն պալատներ: Նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր 2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունմամբ, ինչն իր հերթին բխում էր Հայաստանի Հանրապետության դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանի բնականոն գործունուեությունը ապահովելու, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքով սահմնված նորմերը կիրառելու և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով առաջնորդվելով՝ անհրաժեշտություն է առաջացել գումարել արտահերթ նստաշրջան և իրականացնել ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածուների ընտրությունը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

28.06.2022թ.